ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020թ. հունվարի 11-ից 15-ն Աբու-Դաբիում (Արաբական Միացյալ Էմիրություններ)՝ շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Էրիկ Գրիգորյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Շրջակա միջավայրի նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Աբու-Դաբի (Արաբական Միացյալ Էմիրություններ)
   2020թ. հունվարի 11-ից 15-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Արաբական Միացյալ Էմիրությունների կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի նախարարություն:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն՝ «Աբու Դաբի կայունության շաբաթ 2020» խորագրով ամենամյա միջոցառման բացման արարողությանը, «Զայեդ կայունության մրցանակ» խորագրով մրցանակաբաշխությանը և «Ապագայի կայունության գագաթնաժողովին» (Future Sustainability Summit):

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

   «Աբու Դաբի կայունության շաբաթ 2020» խորագրով ամենամյա միջոցառումը համախմբել էր բարձրաստիճան հատվածի ներկայացուցիչներին, քաղաքականության մշակողներին, ոլորտի մասնագետներին, տեխնոլոգիաների ռահվիրաների և կայունության առաջնորդներին մի շարք երկրներից:

   Միջոցառման շրջանակներում քննարկվել են կայուն զարգացման վերաբերյալ մի շարք հիմնախնդիրներ և այդ ոլորտում ձեռք բերված հաջողությունները:

   Միջոցառումն ընդարձակել է քննարկումների շրջանակը՝ ընդգրկելով նաև վերականգնող էներգիայի վերաբերյալ հարցեր:

   Քննարկվել են նաև գլոբալ տնտեսության միջոցով արդյունաբերության հարմարվողականությունը թվային փոխակերմանն, ինչպես նաև ներկայացվել են նոր հնարավորություններ, որոնք ուղղված են գլոբալ կայունության մարտահրավերներին:

Միջոցառումը հիմք հանդիսացավ միջազգային երկխոսության և համագործակցության համար՝ ուղղված ավելի կայուն ապագային:
«Աբու Դաբիի կայունության շաբաթ 2020-ը» գլոբալ հանդիպման հարթակ էր աշխարհի կայուն զարգացումը խթանելու և գիտելիքների փոխանցման, համագործակցության, ռազմավարության իրականացման և լուծումների մատուցման համար:

Միջոցառման նպատակն էր արագացնել անցումը դեպի ավելի կայուն և ներառական աշխարհ՝ միևնույն ժամանակ ամրապնդելով ԱՄԷ-ի դիրքերը որպես կայուն զարգացման գլոբալ առաջատար: Որպես գործողությունների վրա հիմնված հարթակ «Աբու Դաբիի կայունության շաբաթ 2020-ը» ուղղված էր գործընկերության խթանմանը և լուծումների մշակմանը:

7. <u>ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ</u>

«Աբու Դաբի կայունության շաբաթ 2020» խորագրով ամենամյա միջոցառման շրջանակներում երկկողմ հանդիպում եմ ունեցել Արաբական Միացյալ Էմիրությունների կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի նախարար Թանի Ալ-Զեյուդիի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են 2019թ. հունվարին «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի նախարարության միջև շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման Հուշագրով նախատեսված համագործակցության ուղիները: Քննարկումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց հեռահար անտառավերականգման ուսումնասիրության նպատակով Հայաստանից համապատասխան ոլորտի մասնագետների ԱՄԷ այցը կազմակերպելու վերաբերյալ:
Միջոցառման շրջանակներում երկկողմ հանդիպում եմ ունեցել նաև Արաբական Միացյալ Էմիրությունների սննդի անվտանգության հարցերով պետնախարար Մարիամ Մուհամմադ Ալմեհիրիի և Ռուանդայի Հանրապետության շրջակա միջավայրի նախարար Ժաննա դ'Արք Մուջավամարիայի հետ, որի ընթացքում քննարկվել են շրջակա միջավայրին առնչվող հարցեր:

Շրջակա միջավայրի նախարար

Էրիկ Գրիգորյան

X _____